

Հաճախ տրվող հարցեր

Ի՞նչ է «Գլենդելի կյանքի որակի և կարևորագույն ծառայությունների պահպանման» ձեռնարկը:

Այս ձեռնարկը 0.75% վաճառքի հարկ է, որը Գլենդելի վաճառքի հարկը կդարձնի 9.5%-ից 10.25%, եթե հաստատվի ընտրողների կողմից 2018թ-ի նոյեմբերին: Այս ձեռնարկը կստեղծի մոտավորապես 30 միլիոն դոլար յուրաքանչյուր տարի, որը կկառավարվի քաղաքապետարանի կողմից:

Ինչպե՞ս է օգտագործվելու «Կյանքի որակի և կարևորագույն ծառայությունների պահպանման» ձեռնարկից ստեղծված եկամուտը:

Այս ձեռնարկի ընդունումը կպաշտպանի այն ֆինանսավորումը, որը Գլենդելի քաղաքային խորհրդի ուղղորդմամբ կարող է օգտագործվել մի շարք համայնքային ծառայությունների համար, որոնք ներառում են, բայց չեն սահմանափակվում`

- Տեղական փողոցների, մայրերի և տրանսպորտային ենթակառուցվածքների վերանորոգում և արդիականացում, հետիոտների անվտանգության և երթևեկության բարելավում,
- Տրամադրելու մատչելի բնակարաններ,
- Պաշտպանել և պահպանել ռոտիկանների մակարդակը` ապահովելու համար, որ բավարար քանակությամբ ռոտիկանության աշխատակիցներ կհսկեն փողոցները, զբոսայգիները և թաղամասերը` հանցագործությունը կանխելու և 911 զանգերին արագ արձագանքելու համար:
- Պահպանել տեղական զբոսայգիները, համայնքային կենտրոնները և բաց տարածությունները
- Պահպանել առկա հրշեջ-փրկարարների և անձնակազմի աշխատակազմի մակարդակը
- Պահպանել քաղաքի թաղամասերում տեղակայված հրշեջ կայանների ամբողջական աշխատակազմի ապահովումը և բաց լինելը, և 911-ի արագ արձագանքման ժամանակները, որպեսզի բնակիչները շարունակեն ստանալ որակյալ շտապ բժշկական օգնություն
- Շարունակել գրաֆիտի հեռացումը, երթևեկության խափանումների բարելավումը, կանաչապատումը և այլ ծառայությունները, որոնք մենք գնահատում ենք` մաքուր, առողջ և անվտանգ թաղամասեր պահպանելու նպատակով
- Աջակցել Գլենդելի կայունության ջանքերին` երկարաժամկետ տնտեսական, սոցիալական և բնապահպանական լուծումներ ստեղծելու նպատակով:

Ինչու՞ է անհրաժեշտ եկամուտ ստեղծող ձեռնարկը:

Մեծ անկման ժամանակ Գլենդելն իրականացրել է ծախսերի խնայելու միջոցներ, այդ թվում` 335-ով կամ 17.5 տոկոսով լրիվ դրույքով աշխատատեղերի նվազեցում` իր աշխատուժի կրճատմամբ, մինչդեռ Գլենդելի բնակիչների օգտին սպասարկման մակարդակները պահպանվել են: Նույնիսկ այս քայլերով և բարելավված տնտեսությամբ, սկսած 2019-2020 ֆինանսական տարվանից, Գլենդելի հիմնական ֆոնդը կունենա բյուջեի դեֆիցիտ, որը հնարավոր է աճի մինչև տարեկան 6 միլիոն դոլար մինչև 2023թ-ը:

Ֆիսկալ տարի	Աշխատողների քանակ	Տարբերությունը նախորդ ֆիսկալ տարվա համեմատ	Տարբերությունը տոկոսներով
2005-06	1,995	----	----
2008-09	1,942	- 53	- 2.7%
2012-13	1,605	- 337	- 17.5%
2014-15	1,520	- 85	- 5.3%
2018-19	1,588	+ 68	+ 4.5%

Ո՞վ է վերահսկելու «Կյանքի որակի և կարևորագույն ծառայությունների պահպանման» ձեռնարկից ստացված եկամուտը:

Քաղաքային խորհուրդը որոշում կկայացնի, թե ինչպես ծախսել այդ գումարները՝ իրենց տարեկան բաց բյուջետային գործընթացի ընթացքում, ինչպես նաև հաշվի առնելով Գլենդելի բնակիչների և ձեռնարկությունների արձագանքները:

Գոյություն ունե՞ն արդյոք այլ տեղական համայնքներ, որոնք ուսումնասիրում են նմանատիպ ձեռնարկների ընդունումը:

Այո: Բուրբանկի և Փասադենայի քաղաքապետարանները նույնպես տեղադրել են 0.75% տեղական վաճառքի հարկի բարձրացման ձեռնարկը 2018թ-ի նոյեմբերի քվեաթերթիկի վրա: Եթե այս ձեռնարկը անցնի այս համայնքներում, այն ապահովելու է, որ այդ քաղաքներում տեղական ստեղծված եկամուտները կմնան տեղական և կֆինանսավորեն ոստիկանության և հրշեջ ծառայություններին, հնացած ենթակառուցվածքների կարիքները և կենսամակարդակի պահպանման համար անհրաժեշտ ծառայությունները:

Ինչպե՞ս է օգտագործվելու այս պոտենցիալ նոր եկամուտը:

Ընտրողների կողմից հաստատվելու դեպքում, այս ձեռնարկից ստացված եկամուտը կօգտագործվի Գլենդելի բնակիչների համար անհրաժեշտ ծառայությունները պահպանելու համար: Գլենդելում ստացված յուրաքանչյուր ցենտը մնալու է տեղական, և այն ապագայում չի վերցվի վարչաշրջանի, տարածաշրջանային գործակալությունների կամ հատուկ թաղամասերի կողմից:

Եթե այս ձեռնարկը չանցնի Գլենդելում, հնարավո՞ր է արդյոք վաճառքի հարկի բարձրացում ապագայում:

Լոս Անջելեսի վարչաշրջանը ունի 10.25% վաճառքի հարկի սահմանափակում: Եթե Գլենդելի ընտրողները հաստատեն այս ձեռնարկը, տեղական վաճառքի հարկը կհասնի այդ սահմանին: Եթե այս ձեռնարկը չհաստատվի, Լոս Անջելեսի վարչաշրջանի ընտրողների կողմից հաստատվող ցանկացած այլ վաճառքի հարկ կազդի Գլենդելի վրա, բայց ստացված գումարները ամբողջովին չեն օգտագործվի Գլենդելում:

Եթե անցնի, է՞րբ է այս ձեռնարկը ուժի մեջ մտնելու:

Եթե 2018 թ. նոյեմբերի 6-ին ընտրողների մեծամասնությամբ այն ընդունվի, վաճառքի հարկը ուժի մեջ է մտնելու 2019 թվականի ապրիլի 1-ին:

Ի՞նչու է կարևոր եկամտի տեղական վերահսկողությունը:

Ներկայիս վաճառքի հարկը Գլենդելում կազմում է 9.5%, որից միայն 1%-ն է տեղական վերահսկողության տակ: Մնացորդը գնում է նահանգին և վարչաշրջանին (քաունթի): Այս տարի կանխատեսվում է, որ Գլենդելը 90 միլիոն դոլար է ուղարկելու վարչաշրջանին Գլենդելի ընտրողների կողմից նախկինում հաստատված հատուկ վաճառքի հարկերի համար, ինչպիսիք են Ձեռնարկ H-ը, Առաջարկ C-ն, Առաջարկ A-ն, Ձեռնարկ M-ը և Ձեռնարկ R-ը, սակայն այս ստացված 90 միլիոն դոլարից միայն 15 միլիոնն է վերադարձվելու Գլենդելին:

Ինչպե՞ս կարող ենք վստահ լինել, որ ձեռնարկի արդյունքում առաջացած միջոցները պատասխանատու կերպով են ծախսվելու:

Գլենդելը ունի ֆինակալային պատասխանատվության ապացուցված արձանագրություն: Խիստ հաշվետվողականությունը և հանրային վերահսկողությունը ընդգրկված են այս ձեռնարկի մեջ, որպեսզի համոզվեն, որ գումարները ծախսվելու են արդյունավետ կերպով, ներառյալ անկախ տարեկան ֆինանսական աուդիտները, և արգելում են այլ տարածաշրջանային գործակալությունների և հատուկ թաղամասերին այս գումարներից օգտվելը:

Որո՞նք են գնումների տեսակները, որոնք ենթակա են այս ձեռնարկին:

«Կյանքի որակի և կարևորագույն ծառայությունների պահպանման» ձեռնարկը վերաբերվում է միայն հարկվող ապրանքներին, ինչպիսիք են նյութական իրերը, և օրենքով չի կիրառվում չմշակված սննդամթերքների վրա, ինչպիսիք են մթերային խանութից կամ ֆերմերների շուկայից գնված մթերքները: Այն չի կիրառվում նաև դեղատոմսով տրամադրված դեղերի կամ անշարժ գույքի գործարքների ժամանակ:

Ի՞նչպես կարող եմ հավելյալ տեղեկություններ ձեռք բերել:

Հավելյալ տեղեկությունների համար խնդրում ենք կապվել կառավարական ծառայություններ ուղարկելով էլ-փոստ myglendale@glendaleca.gov հասցեով կամ զանգահարելով (818) 548-4844, կամ այցելելով thisismyglendale.com: